



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2019 թվականի թիվ 90-Ա

ք. Երևան

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՄՏԱՎՈՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ (ՖԻԼՄԵՐԻ),
ԱՅԼ ՏԵՍԱԶԱՅՆԱՇԱՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

14 օգոստոսի 2019թ.
ք. Երևան

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՄՏԱՎՈՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՌՈՒՄՏԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ (ՖԻԼՄԵՐԻ), ԱՅԼ ՏԵՍԱԶԱՅՆԱՇԱՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

1. Սույն չափորոշիչները սահմանում են, որ Հայաստանի Հանրապետության տարածքում անչափահասների իրավունքներին վերաբերող հրապարակումներում հեռուստառադիոընկերությունները պետք է գործեն մասնագիտական էթիկական նորմերի, ՀՀ օրենսդրության և միջազգային կոնվենցիաների պահանջներին համապատասխան: Քանի որ երեխաներն ունեն հատուկ հոգաձության և օժանդակության իրավունք, ուստի յուրաքանչյուր երեխայի իրավունքները և շահերը ավելի վեր են, քան այս կամ այն հիմնախնդրի լուծման հրատապությունը և հեռուստառադիոընկերությունում այն օգտագործելու անհրաժեշտությունը: Յուրաքանչյուր երեխա պետք է պաշտպանված լինի ցանկացած իրավիճակում, նրա շահերը, անվտանգությունը պետք է գերակա լինեն խմբագրական ցանկացած պահանջների հանդեպ:

Մասնավորապես, հեռուստառադիոընկերությունները պետք է առաջնորդվեն հետևյալ սկզբունքներով.

ա) Անչափահասներին վերաբերող հիմնախնդիրները լուսաբանելիս հեռուստառադիոընկերությունները ձգտում են առավելագույն ճշգրտության, ապահովում են անչափահասների մասին տրամադրած տեղեկատվության հավաստիությունը,

բ) Տեսաձայնաշարային նյութերում հեռուստառադիոընկերությունները խուսափում են անչափահասներին վնաս հասցնող տեղեկատվության օգտագործումից,

գ) Հեռուստառադիոընկերությունները գիտակցում են անչափահասներին վերաբերող յուրաքանչյուր նյութ հեռարձակելու հետևանքները և նվազագույնի են հասցնում նրանց համար հնարավոր վտանգները,

դ) Հեռուստառադիոընկերությունները ստուգում են անչափահասների անունից էլույթ ունեցող և նրանց շահերը ներկայացնող ցանկացած անձի կամ կազմակերպության իրավասությունները,

ե) Հեռուստառադիոընկերությունները տեղեկացված են, որ անչափահասը ունի մտքի, խղճի և դավանանքի ազատություն՝ ըստ ծնողների կողմից տրվող պատշաճ կողմնորոշման և Հայաստանի Հանրապետության օրենսդրության:

2. Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն հեռուստառադիոհաղորդումները (ֆիլմերը), այլ տեսաձայնաշարային նյութերը, որոնք՝

ա) հրապարակում են անչափահասների մասին տեղեկատվություն, ներառյալ՝ անձնական տվյալներ (անուն/ազգանուն, տարիք, բնակության վայր) կամ ցուցադրում են դեմքը՝ առանց ծնողների, խնամակալի, հոգաբարձուի համաձայնության: Սա հատկապես կարևորվում է խոցելի իրավիճակում գտնվող անչափահասների և ընտանիքների պարագայում (խոցելիության սահմանման համար հիմք են ընդունվում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անչափահասների համար սահմանված պետական չափորոշիչները),

բ) ցուցադրում են բռնություն (հոգեբանական, ֆիզիկական, սեռական և այլն) պարունակող կադրեր (նվազագույնը՝ առանց դատապարտելու բռնությունը) կամ խրախուսում են բռնի գործողությունները մարդկանց կամ կենդանիների հանդեպ,

գ) կնոջ և տղամարդու խիստ կարծրատիպացված կերպարներ են քարոզում, կնոջը ներկայացնում են մշտապես ենթարկվողի, ճնշվածի կերպարով, իսկ տղամարդուն՝ իշխանություն և բռնություն գործադրողի,

դ) խեղաթյուրում են հանրակրթական ուսումնադաստիարակչական ծրագրերում ներառված պատմական իրողությունները, վարկաբեկում և նսեմացնում են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը,

ե) նսեմացնում և վարկաբեկում են համամարդկային արժեքները, Հայ Առաքելական եկեղեցուն, ինչպես նաև Հայաստանում գրանցված և գործող այլ կրոնական կազմակերպություններին,

զ) ժխտում են բարոյականության համընդհանուր նորմերը և քարոզում անբարո ապրելակերպ, նսեմացնում կրթության և դաստիարակության դերը,

է) նպաստում են հանցագործ աշխարհի բարքերի, վարվելաձևերի, խոսելաձևերի հասարակության մեջ տարածմանը, հանցագործ կերպարների և կենսակերպի ռոմանտիզացիային,

ը) ցուցադրում կամ նմանակում են թմրամոլի կամ հարբեցողի՝ առանց դատապարտելու թմրամոլությունը և հարբեցողությունը,

թ) երեխաների մոտ ցանկություն են առաջացնում մասնակցելու մոլեխաղերին, զբաղվել մարմնավաճառությամբ, շրջմոլիկությամբ կամ մուրացկանությամբ,

ժ) ծաղրում կամ ծաղրելով նմանակում են հաշմանդամություն (ֆիզիկական և/կամ մտավոր) ունեցող անձանց,

ի) պարունակում են գռեհկաբանություն և հայհոյախոսություն:

3. Ժամը 6.00-24.00 ընկած ժամանակահատվածում ցուցադրվող հաղորդումները չեն կարող պարունակել անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսարաններ: